

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ ՀԱՅԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻՆ

Հրաչիկ Սիմոնյան. Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Երևան, ԵՊՀ հրատ., 2009, 530 էջ:

1909 թ. կիլիկյան կոտորածների պատմությանը և պատմագրությանը նվիրված մենագրությունների թվում իր ուրուց տեղն ունի ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանի հիմնարար մենագրությունը, որը բաղկացած է չորս գլուխց, ներածությունից, վերջարանից, հավելվածներից, օգտագործված առյութների և գրականության, անձնանունների և տեղանունների ցանկերից: Հավելվածում հրապարակված են ամերիկյան «Նյու Յորք Թայմ» թերթում 1909 թ. տպագրված հոդվածներ և թղթակցություններ, իրադարձության պատկերն արտացոլող մեծ թվով լուսանկարներ, համացանցային կայրում տեղադրված փաստաթուղթ՝ «Աղանայի քրիստոնյանների հոգևոր պետերի՝ սուլթան Մուհամմեդ Ե-ին հղած 17 հունիսի 1909 թ. խնդրանք-բողոքագիրը»:

Հր. Սիմոնյանը շրջանառության մեջ է դրել մեծարանակ հայկական արժանահավատ սկզբնադրությունը, առաջին անգամ օգտագործել հայենական արխիվներից (ՀՀ ազգային արխիվ, Մատենադարան, Գրականության և արվեստի թանգարան) քաղլած բազմապիսի անտիկ վավերագրեր, որոնք մեծապես նպաստել են տարրեր հիմնախնդիրների առավել խորն ուսումնասիրությանը: Աշխատությունը հիմնվում է նաև տարրեր կողմնորոշումներ ունեցող հայկական պարբերականների հարուստ նյութերի, ինչպես նաև հայ ականատեսների ու գործիչների վկայությունների վրա, որոնք հեղինակին հնարավորություն են ընձեռել մանրագնին վերլուծել բազում կնճռոտ և առ այսօր տարակարծությունների տեղիք տվող հիմնահարցեր: Հիշարժան են նրա մեկնարանությունները կիլիկյան կոտորածների կազմակերպիչների բացահայտման ուղղությամբ. հեղինակը դրանց պատասխանատվությունը վերագրում է երիտթուրքերին:

Հր. Սիմոնյանի ամենամեծ արժանիքներից է կիլիկիահայության ոչնչացման գործընթացի մանրագնին ուսումնասիրությունը: Նա հանգամանորեն ուրվագծում է կոտորածների ընթացքը, ըստ բնակավայրերի, ոչ միայն տարածաշրջանի մեծ քաղաքներում (Աղանա, Տարսոս, Մերսին և այլն), այև Աղանայի ու Հալեպի վիլայեթների գյուղերում և գյուղապետարաններում, բացահայտում նաև դրանց ծավալման առանձնահատկությունները տարբեր վայրերում:

Հաստ պ. գ. դ. Վ. Դողոսյանի գրախոսության (Պատմարանասիրական հանդես, 2009, թիվ 1)

Վարուժան Պողոսյան, 1909 թ. հայկական կոտորածները Կիլիկիայում ֆրանսիական պատմագրության զնահատմամբ, Երևան: «Նահապետ» հրատ., 2009, 144 էջ:

Աշխատությունը նվիրված է 1909 թ. կիլիկիահայության կոտորածների՝ ֆրանսիական պատմագրության կողմից կատարված անդրադարձների քննական վերլուծությանը: Հեղինակը քննության է առնում Հայոց ցեղասպանության իշշալ կարևոր փուլի ուսումնամարդության ասպարեզում ֆրանսիական պատմագրության ներդրումը XX դարի 10-ական թվականներին սկսած կոտորածների սանձազերծումից մինչև երիտրուրքերի իշխանության տապալումը: Այս աշխատության կարևորությունը մեծ է հատկապես Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական քաղաքականության դեմ պայքարելու տեսանկյունից: Շրջանառության մեջ դնելով փաստական հարուստ նյութեր՝ Վ. Պողոսյանն ընթերցողին ապացուցում է, որ քննարկվող ժամանակահատվածում ֆրանսիական պատմագրությունն արժանի հակահարված է տալիս պատմության թուրք և այլազգի կեղծարարներին: Ֆրանսիացի ուսումնասիրողները պարզուց ցույց են տալիս, որ Հայոց ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում իրականացվում էր պետական քաղաքականության նակարդակով, կրում էր կազմակերպված բնույթ, իսկ կազմակերպիչները փորձում էին պատասխանատվությունը բարդել հենց զոհի վրա:

Վ. Պողոսյանն անդրադարձում է 1909 թ. կիլիկիահայության կոտորածների առնչությամբ իրադարձությանը ժամանակակից ֆրանսիացի հեղինակների տարակարձություններին և գտնում, որ կոտորածների պատասխանատվությունը, անտարակույս, ծանրանում է առաջին հերթին երիտրուրքերի վարչակարգի վրա, որը 1909 թ. մարտի 31-ի դեպքերից ավելի վաղ էր ծրագրել և նախապատրաստել կիլիկիահայության բնաջնջումը, սակայն միաժամանակ փաստում, որ դրա իրականացմանը մեծապես նպաստել են նաև համիլյան վարչակարգի ներկայացուցիչները:

Այս թեման նախկինում չի դարձել առանձին ուսումնասիրության առարկա, հետևաբար Վ. Պողոսյանի աշխատությունը կարևոր ներդրում է Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ:

Հստ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ. գ. դ. Բ. Հարությունյանի առաջարանի

Georges Brézol, Les Turcs ont passé là..., Paris, 1911, 400 p.

Ժորժ Բրեզոլ, Այստեղով թուրքերն են անցել..., Փարիզ, 1911, 400 էջ

Ժորժ Բրեզոլ գրող, ճանապարհորդ: Այս կեղծանվամբ է հանդես եկել հայազգի Պետրոս Ազնավուրը:

Ժորժ Բրեզոլը «Այստեղով թուրքերն են անցել...» մենագրության վերնագիրը վերցրել է Վիկտոր Հյուգոյի «Արևելցիները» բանաստեղծությունից: Այս գիրքն արժեքավոր աղբյուր է 1909 թ. ապրիլին Աղասի Շաղարի և հարակից հայկական գյուղերի կոտորածների մասին: Գրքում առկա են 1909 թ. կոտորածներին առնչվող բացառիկ վավերագրեր, վկայություններ ու լուսանկարներ, որոնք ընթերցողին թույլ են տալիս մտովի հետևել կոտորածների ընթացքին օր օրի, բնակավայր առ բնակավայր և ստանալ հստակ պատկերացում դրանց հետևանքների մասին: Գիրքը լուսաբանում է Հաճընի, Կարս-Բազարի, Դյորք-Յոլի և այլ բնակավայրերի հայերի ինքնապաշտպանության դրվագները: Հեղինակը խոսում է նաև որոշ թուրք գործիչների՝ հայերի նկատմամբ դրսնորած դրական վերաբերմունքի, օտարերկրյա դիմանագետների ցուցաբերած օգնության մասին:

Գիրքը վերահրատարակվել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից 2009թ.:

Ferriman Ducket, Turkish Atrocities, The Young Turks and the Truth about the Holocaust at Adana, in Asia Minor, during April, London, 1909, 146 p.

Ֆերիման Դաքետ,Թուրքական ղաֆանություն,Երիտրուրքերը և ճշմարտությունը
Աղանայի ողջակիզման մասին/Փոքր Ասիա, 1909թ. ապրիլ, Լոնդոն, 146, էջ:

Ֆերիման Դաքետի այս մենագրությունը, որն առաջին անգամ հրատարակվել է 1913թ. Լոնդոնում, ներկայացնում է 1909 թվականին թուրքական իշխանությունների կողմից կազմակերպված և իրականացված հայկական ջարդերը: Այս գիրքը արժեքավոր աղբյուր է նվիրված Կիլիկյան ջարդերին՝ վեր հանելով Կիլիկիայում և Աղանայում տեղի ունեցած սարսափելի իրադարձությունների կարևոր և անհայտ մանրամասները: Հետինակն անդրադարձել է իշխանությունների կազմակերպած արյունոտ ջարդերին, Աղանա նահանգի թուրք բնակչության, մասնավորապես, մուսուլման ամրության ակտիվ մասնակցությանը: Դաքետն առաջին անգամ շրջանառության մեջ է դրել «Հոլոքոստ» եզրը. 1909թ. Կիլիկիայի կոտորածները նրա գրքի առաջին գլխում շարադրված են «Աղանայի հոլոքոստը» խորագրի տակ: Այդ արյունալի իրադարձությունները և բռնությունները Հոլոքոստ (Ողջակիզմ) անվանումն են ստացել, քանի որ բազմաթիվ մարդիկ ողջ-ողջ այրվել էին: Նա դեպքերի և իրադարձությունների խոր վերլուծություն է կատարել, որն էլ այս մենագրությունն իր ժամանակի համար բացառիկ է դարձրել:

Գիրքը վերահրատարակվել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից 2009թ.:

Adossidès, Arméniens et Jeunes-Turcs. Les massacres de Cilicie, Paris, 1910, 142 p.

Ա. Աղոսիդես, Հայերը և Երիտրուրքերը. Կիլիկիայի կոտորածները, Փարիզ, 1910, 142 էջ :

Ակերսանդր Աղոսիդես. ծագումով հոյն ֆրանսիացի լրագրող: Կիլիկիայի շարդերից ութ ամիս հետո՝ 1909 թ. դեկտեմբերին, նա գրել է իր առաջին ամբողջական ուսումնասիրություններից մեկը:

Ակերսանդր Աղոսիդեսը «Հայերը և Երիտրուրքերը. Կիլիկիայի կոտորածները» գրքում փաստական հարուստ նյութի հիման վրա, ինչպիսիք են՝ հյուպատոսների գեկույցներ, կաթողիկ առաքելության գործիչների պաշտոնական հաշվետվություններ, Եվրոպացի և ամերիկյան քարոզիչների գրառումներ, նամակներ, ականատեսների վկայություններ, ժամանակակից մամուլ և այլն, նկարագրում է 1909թ. հայերի կոտորածները Կիլիկիայում: Աղոսիդեալ փուլ առ փուլ լուսաբանել է Աղանա քաղաքի առաջին և երկրորդ, ապա՝ Աղանայի ու Հալեպի վիլայեթների մյուս բնակավայրերում իրազործված կոտորածների ընթացքը, արձանագրել, որ դրանք իրականացրել են թուրք կանոնավոր զորքերն ու պատրաստված հրոսակախմբերը: Գրքում տեղ են գտել նաև օսմանյան խորհրդի երկու պատգամավորների՝ ազգությամբ հայ Հ. Պապիկյանի և ազգությամբ թուրք Յուսուֆ Քեմալի կատարած ուսումնասիրությունները զոհերի թվի վերաբերյալ: Վերջին գլուխ, որ վերնագրված է «Կոտորածներից հետո», հեղինակը փաստել է, որ Երիտրուրքական իշխանությունները ոչ մի էական քայլ չկատարեցին հանցագործներին պատժելու ուղղությամբ:

Գիրքը վերահրատարակվել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից 2012թ.: